

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԼԵՎՈՆ ԶԱՔՈՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔ-
ՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 63-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ
ՄԱՍԻ «Բ» ԿԵՏԻ՝ ԻՐԱՎԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԴՐԱՆ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱ-
ԲԱՆՈՒԹՅԱՄԲ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱ-
ՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ
ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Լևոն Զաքոյանի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետի՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրու- թյանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով կարճելու վերաբերյալ գործով զեկուցողի առաջարկությունը, **Պ Ա Ր Ջ Ե Ց .**

1. Արմեն Սարգսյանը, գտնելով Արա Թադևոսյանի անձնագիրը, հանդես գալով որպես Արա Թադևոսյան, քաղաքացի Նշան Համբարձումյանի հետ կնքած գույքի վարձակալության պայմանագիրը կեղծելով և ներկայացնելով որպես նվիրատվու- թյան պայմանագիր, (թիվ ԵԿԴ/0238/01/16 քրեական գործ), անշարժ գույքի պետական կադաստրում 04.09.2015 թվականին գրանցել է Երևան քաղաքի Կենտրոն համայնքի Թումանյան փողոցի 11 շենքի 44 ոչ բնակելի տարածքի նկատմամբ սեփականության իրավունքը: Այնուհետև, հանդես գալով որպես Արա Թադևոսյան, նշված գույքը

վաճառել է քաղաքացի Լևոն Չաքոյանին, որն էլ վերոհիշյալ տարածքի նկատմամբ 15.09.2015 թվականին գրանցել է իր սեփականության իրավունքը:

Քաղաքացի Նշան Համբարձումյանի հայցադիմումի հիման վրա ՀՀ վարչական դատարանն անվավեր է ճանաչել Երևան քաղաքի Կենտրոն համայնքի Թումանյան փողոցի 11 շենքի 44 ոչ բնակելի տարածքի նկատմամբ 04.09.2015թ. Արա Թադևոսյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը, ինչպես նաև 15.09.2015թ. Լևոն Չաքոյանի սեփականության իրավունքի պետական գրանցումը:

2. Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում խնդրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետի՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, ճանաչել Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին, Հանրապետության Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի մարտի 16-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի դեկտեմբերի 31-ից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի «Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելը» վերտառությամբ 63-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետի համաձայն՝

«4. Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք չունի, եթե նա՝

...

բ) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով»:

Դիմողը գտնում է, որ եթե վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի ընդունման համար ներկայացրել է, ի թիվս այլնի, կեղծ փաստաթուղթ, որի կեղծման հետ որևէ առնչություն չունի, ապա այդ ոչ իրավաչափ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է ոչ թե վարչական ակտն ընդունելու պահից, այլ այն անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու պահից:

Մինչդեռ, ըստ դիմողի՝ խնդրո առարկա գործով ՀՀ վարչական և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանները վիճարկվող դրույթին հաղորդել են այնպիսի բովանդակություն, համաձայն որի՝ ոչ իրավաչափ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է վարչական ակտն ընդունելու պահից, եթե վարչական ակտը, վարչական ակտի հասցեատիրոջ կամքից անկախ, հիմնվում է կեղծ փաստաթղթի վրա: Այսինքն, ըստ դիմողի՝ իրավակիրառ պրակտիկայում հաշվի չի առնվում վարչական ակտի հասցեատիրոջ մեղավորությունը, ինչի հետևանքով խախտվում է Սահմանադրությամբ ամրագրված արդար դատաքննության իրավունքը:

3. Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ինչպես նաև դիմողի նկատմամբ կայացված դատական ակտերի հիմքում դրված պատճառաբանությունների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ դիմումն ակնհայտ անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

ՀՀ վարչական դատարանը, նվիրատվության կեղծված պայմանագիր ներկայացնելու պարագայում գտել է, որ հասցեատերը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետի համաձայն՝ սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք չունի, և համապատասխան վարչական ակտն անվավեր է ճանաչել ընդունման պահից՝ միաժամանակ անվավեր ճանաչելով դիմողի սեփականության իրավունքի գրանցման վերաբերյալ վարչական ակտը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, համաձայն որոնց՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Միաժամանակ, դիմողի կողմից որևէ հիմնավորում չի ներկայացվել վիճարկվող դրույթի՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասելու վերաբերյալ:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝ ա) երբ

կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը, բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Միաժամանակ, նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է...»:

Հաշվի առնելով հիշյալ իրավակարգավորումների պահանջները, ինչպես նաև այն հանգամանքը, որ դիմումում չի հիմնավորվում դիմող կողմի հիմնական իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման վերաբերյալ սահմանադրաիրավական վեճի առկայությունը, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակում ներկայացված անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 69-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Լևոն Զաքոյանի դիմումի հիման վրա՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետի՝ իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, Սահմանա-

դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

4 մայիսի 2018 թվականի
ՍԴԱՈ-35